ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 3 » ապրիլի 2025 թվականի N:131-Ա ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԿՐԱՇԵՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՄԵԾ ՍԱՐԻԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՋԱՋՈՒՌ ԿԱՅԱՐԱՆԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ԳՈՀԱՐ ՍԵՐՈԲՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N 398-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Գոհար Սերոբյանի 2025 թվականի փետրվարի 11-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կրաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզի «Մեծ Սարիարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ջաջուռ կայարանի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միացյալ խորհրդի անդամ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կրաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Գոհար Սերոբյանի լիազորությունները:

2. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2022 թվականի հուլիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կրաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մեծ Սարիարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ջաջուռ կայարանի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միացյալ խորհրդի անվանական կազմը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի մայիսի 26-ի N 153-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 27-ի N 254-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 30-ի N 267-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 398-Ա որոշման հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետից հանել «Գոհար Սերոբյան» բառերը:

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է